



ԳՐԻԳՈՐ ԳԱՐԵԳԻՆՅԱՆԻ

ԼՈՒՅՍԻ ՊԵՍ ՄԱՔՈՒՐ, ԼՈՒՅՍԻ ՊԵՍ

ՋԵՐՄԱՆՅՈՂ ԿՅԱՆՔԸ

Երևանի պետական հասալսարանի ժամա- (ակակից հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր Գրիգոր Լուսինի Գարեգինյանը կյանքից հեռացավ մեծերի պես՝ հանկարծ ու անսպասելի: Նրա նահվան բոթին սուս ականջալոր ծանոթ- րարեկամները երկար ժամանակ չէին ուզում հավատալ այդ դաժան եղելությանը: Բազմա- զբաղ ու գործունյա, եռանդուն ու երիտասարդ գիտնականի ապրած տարիքն անգամ,— վաթ- սունհինգ տարի,— շատերի համար հայտնու- թյուն եղավ: Ո՛վ կկարծեր, թե Գրիգորը նույ- նիսկ հիսունից անց մարդ է:

Ծնվել էր 1927 թ. հոկտեմբերի 20-ին Բուլ- դարիայի Սիլվեն քաղաքում, արհեստավորի ընտանիքում: 1930 թ. ընտանիքով Ֆրանսիա տեղափոխվելուց հետո Գրիգորը 1934 թ. ըն- դունվել և երկու տարի սովորել էր Փարիզի Ալֆրոպիլ արվարձանի ֆրանսիական դպրո- ցում: 1936 թ. Գարեգինյանների ընտանիքը ներգաղթեց Հայաստան: Գրիգորը 1936—1944 թթ. սովորեց և գերազանցությամբ ավարտեց Երևանի Ա. Օիրվանզադեի անվան դպրոցը, այնուհետև 1944-ին ընդունվեց և 1948-ին ավարտեց Երևանի ռուսական մանկավարժա- կան ինստիտուտի օտար լեզուների ֆակուլ- տետի ֆրանսիական բաժինը: Ավելի քան տասը տարի (1948—1960 թթ.) ֆրանսերեն էր դասավանդում մայրաքաղաքի տարբեր դպրոցներում և գյուղատնտեսական ինստի- տուտում: Զուգահեռաբար սովորեց (1953— 1957 թթ.) ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրայում, որն ա- վարտելով՝ 1959 թ. պաշտպանեց թեկնածուա- լուսն դիսերտացիա և դարձավ բանասիրական գիտությունների թեկնածու:

Ինչևս 1950—53 թթ. Գարեգինյանը, բախ- տի երջանիկ բերումով, աշխատեց Հրաչյա Աճառյանի ձեռքի տակ, իր բանմասցությամբ գիտնականի ծառանգությունը ամբողջացնելուց օգտակար լինելու նպատակով, և դարձավ նրա համբավավոր դպրոցի սանը: 1959—65

թթ. գիտական աշխատանք էր կատարում ԳԱ լեզվի ինստիտուտում, որտեղ էլ լաբորանտից բարձրացավ ավագ գիտաշխատողի աստիճա- նի: 1966 թ.-ին Գարեգինյանը փոխադրվեց Երևանի պետական համալսարան և սկսեց աշխատել որպես հայոց լեզվի ամբիոնի դո- ցենտ: Նա լեզվի ինստիտուտում վարել է գի- տական քարտուղարի, իսկ համալսարանում՝ բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղա- կալի սրբաշունչներ:

Ցավոք, ընդամենը մի քանի ամիս տեց Գրիգոր Գարեգինյանի գործունեությունը «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի խմբագրական մարմնում, բայց այդ կարճա- գույն ժամանակահատվածում նա իրեն դըր- մևորեց որպես բարեխիղճ ու ճշտապահ, իրը- տասպահանջ ու բարյացակամ աշխատող:

Գրիգոր Գարեգինյանը 1988 թ. պաշտպա- նելով դիսերտացիա, ստացավ գիտության դոկտորի աստիճան, իսկ 1990 թ. նրան շը- նորհվեց պրոֆեսորի կոչում:

1983 թ. Գարեգինյանը հրատարակել է «Ժողկույակները ժամանակակից հայերենում», իսկ 1987 թ.՝ «Ժամանակակից հայոց լեզվի բարդ նախադասությունը» ծավալուն մենա- գրությունները: Հեղինակակից էր ֆրանսերե- նի 8-րդ դասարանի դասագրքի, ԳԱ հրատա- րակած «Ժամանակակից հայոց լեզվի բա- ցատրական բառարանի» I հատորում ուներ իր հեղինակային մասնակցությունը, մասնա- կից էր Հր. Աճառյանի Լիակատար քերական- ության, Աճառյանների բառարանի (5-րդ հ.), Արմատական բառարանի (4-րդ հ.) հրա- տարակությունների գիտական խիստ կարևոր աշխատանքների: Գարեգինյանի գիտական հետաքրքրասիրությունների մեղ շրջանակը լին հայերենի շարահյուսությունն էր, բայց նա մենագրություններում և առանձին հրա- պարակումներում շոշափված են նաև ժամա- նակակից հայերենի կառուցվածքին վերաբե- րող շատ այլ հարցեր:

Իբրև դասախոս և գիտնական՝ Գարեգին-

յանը խստապահանջ էր և՛ իր, և՛ ուսանողի նկատմամբ: Նա հեռու էր ստեղծագործական բեղմնավորության ժամանակակից դարձած մարմնաչից: Գրում էր, երբ ասելիքը նոր ու սեփական էր: Նրա տարերքը լսարանն ու դասախոսություններն էին: Ժամանակակից հայոց լեզվի բարդ նախադասության շարահյուսության բուրական ձեռնարկի հեղինակն էր, ուսանողության մշտական սիրելին. և չէր կարելի չնախանձել նրա, որպես դասախոսի, զնայով տարածվող համբավին: Համբավավոր ուսուցիչ և հմայքով մարդ էր նա: Հայերենի բազմաձև ու բազմաբովանդակ նախադասության կառույցների ներդաշնակությունը հետազոտող Գարեգինյանն ինքն էլ արտաքինի ու ներքինի մի նուրբ ներդաշնակություն էր: Իսկ արտաքինը անտեսանելիորեն ձուլված էր էությանը: Թեև արտաքնապես բարեկիրթ ու առաքինող, միշտ շիկ ու կոկ, բայց ամբողջությամբ էություն էր նա, միայն էություն: Եվ այդ էության մեջ նստած էր մարդը՝ բարի, ազնիվ, առաքինի մարդը: Համեստ էր ամոթխածության աստիճանի, մեծահոգի էր ու ներողամիտ, բայց երբ մեջտեղը գիտական սկզբունք, ոտնահարված ճշմարտություն կամ անպաշտպան ազնվություն կար, Գարեգինյանի խիզախ բռնկումը հասնում էր հանդրճանության:

Հայրենասիրությունը նրա համար ոչ թե արարողություն-ցուցադրանք, այլ առօրյա գործ ու կենսաձև էր: Գարեգինյանի հետ,

ընկերներով, տարիներ առաջ եղանք Արցախում: Հիացած էր Արցախի բնությամբ, մարդկանցով, ապրում էր նրա պատմությամբ: Անբըին 3—4 տարիներին մաշվում էր հային տանջող արցախյան վշտից և, խաղաղություն չտեսած, այդ վշտով էլ գնաց:

Աշխարհ տեսած, կարդացած մտավորալիս էր և միշտ ասելիք ուներ. սակայն խոսելուց սովելի գերադասում էր լսել: Համալսարանական գիտությանն ու ուսմանը ինքնամոռացության աստիճանի նվիրված Գրիգոր Գարեգինյանը նաև ընտանիքի մարդ էր՝ սիրող ստո՛ւսին, գորովագութ հայր ու պապ: Ամբողջ կյանքում տուն էր շինում՝ սեփական ձեռքերով, ճակատի քրտինքով: Պատրաստվում էր տարեմուտը նորակառույց բնակարանում անցկացնելու: Ավա՛ղ. Աստված շատ համարեց...

Ափսոս այլևս չկա Գրիգոր Գարեգինյանը: Աշխարհն աղքատացավ ևս մի իսկական մարդով: Էլ ո՛վ մնաց... Մնում են քչերը: Իսկ այդ քչերն էլ երևի ստեղծված են հաճուն այն բանի, որ Աստծո մահկանացուն մարդ կոչվելու համար իրեն շատ նվաստացած չզգու...

Խաղաղություն լույսի պես մաքուր, լույսի պես ջերմացնող կյանքով ապրած Գրիգոր Գարեգինյանի հոգուն և նրան իրենց հետ հավիտենություն տանող մեր մյուս հարազատների հոգիներին:

Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ